

22.192

№ 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՄ ՄՈՒՆԻԿՍՏԱԿԱՆ ԳՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

№ 8

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք.

ՊԱՆԵԿՈՒԿ



Թ Ա Լ Ա Ն Ի Բ Ա Ժ Ա Ն Ո Ւ Մ Ը

(ՅԱԻԵԼԵԱԼ ԱՐԺԷՔԻ ՄԱՍԻՆ)

ԿՆՆ Է 1 ՈՒԲ.

Թարգմանեց ՅԱՐ. ՍՕԼՕՎԵՍՆ

ՀՐԵՏԱՐԱԿՈՒԹՒՆ

ԻՅԱՍԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՍՏԵՒ.

ՄՈՍԿՎԱ—1919.

15 JAN 2010

05 FEB 2000

№ 8 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԳՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
КОММУНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ АРМЕНИИ № 8

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք.

ՊԱՆԵԿՈՒԿ

300
1554-ՊԱ *պ*

Թ Ա Լ Ա Ն Ի Բ Ա Ժ Ա Ն Ո Ւ Մ Ը

(ՅԱԻԵԼԵԱԼ ԱՐԺԷՔԻ ՄԱՍԻՆ)

Թարգմանեց ՅԱՐ. ՍՕԼՕԿԵԱՆ

ПАННЕКУК.—Раздел добычи.

1003
12292

ԳԻՆՆ Է. 1 ԲՈՒՐ.

ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ.
ՄՈՍԿՎԱ—1919.

17 JUL 2013

22.192

I.

Եթէ որեւէ Ֆարրիկայի կամ գործարանի բանւորներն իրենց տէր-հարստահարիչի դէմ կուելով օւզենան բարեկաւել իրենց դրութիւնը, նրանք խկոյն կնկատեն, որ գործաբանատէրը միայնակ չէ: Եւ որքան աւելի յաճառ ժաքաւեն բանւորները, այնքան աւելի ծանր կլինի նրանց կոխը, որովհետեւ նրանց տիրոջը օգնութեան կհասնէ կապիտալիստ-տէրերի ամբողջ դասակարգը. ո՛չ միայն արդիւնաբերութեան նոյն ճիւղի տէրերը կօզնեն նրան: Կապիտալիստներին իհարկէ անշահաւէտ է, երբ բանւորները թէկուզ մի գործաբանում կարողանում են բարեկաւել աշխատանքի պայմանները: Կապիտալիստների դասակարգային համերաշխութիւնը շատ աւելի հեռու է զնում, և ստեղծում է կապիտալիստների մեծաքանակ մի դաշնակցութիւն: Բաւական է ուշադրութեամբ դիտել մի խոշոր գործադուլ կամ առհասարակ մի լուրջ կոխը որ մղում է որեւէ պրօֆեսիօնալ միութիւն կապիտալիստի դէմ, և մենք կտեսնենք՝ որպիսի համերաշխութեամբ են յարժակում «չափք անցած» բանւորների վրայ զանազան աղաներն և տէրերն իրենց սպասաւորներով: Աւելի ևս պարզ է երեւան զալիս բուրժուազիւսի այդ համերաշխութիւնը, երբ ո՛չ թէ անտեսական այլ քաղաքական կոււի հարց է ծագում: Բանւոր դասակարգը ոչ մի տեղից չի ստանում աջակցութիւն, մինչգեռ հասարակութեան բոլոր միուս դասակարգերը, որքան էլ կատաղի չկուէին նրանք միմիանց դէմ՝ միշտ համերաշխ և միասին կմտնեն մեր վերջնական նպատակը՝ օտջիալիզմի դէմ:

Գժւար չէ հասկանալ, թէ ի՞նչու է դա արդէս: Չէ՞ որ բոլոր այդ դասակարգերը, — բացի զիւզացիներէից, որ իրապէս նոյնպէս շահագործուում է կապիտալիստների կօզմէից, —

Տարան՝ Գեներալն. Հայկական Գործարարատի, Մոսկա, Արմենսկի փ. . . 2
 В по графия Центрального Армянского Комиссариата. Москва, Армянск. п. 2

շահագործում են բանւորներին և բոլորն էլ շահագործուած են նրանում, որ այդ շահագործումը զահպանւի ընդ-միջառ: Եթէ լուս մտածենք—մեզ համար տարր կլինի, որ բանւորին հարստահարում է ոչ թէ առանձին կապիտալիստը. այլ կապիտալիստների ամբողջ դասակարգը. ֆարրիկանտին չէ յաջողում իր գրպանը դնել ամբողջ յաւելեալ արժէքը, այսինքն ամբողջ այն տարբերութիւնը, որ կայ բանւորի արտադրած ապրանքի արժէքի և բանւորի կեանքի համար անհրաժեշտ պիտոյքների գներն մէջ: Իր շահից Ֆարրիկանտը օտարուած է որոշ մասը յատկացնել բանկիրին և մեծ գրեմատերին, որոնք նրան փող են տւել Ֆարրիկան բանալու և պահելու համար: Փայերով հիմնած (ակցիոներական) գործարանում այդ պարտնները, իբրև ակցիոներներ, վերցնում են ամենախոշոր մասը, իսկ հիմնարկութեան ղեկավարին թողնում են—գիրէկտորի խոշոր ռոնիկը. օգուտի միւս մասը իրենց գրպանն են քաշում նաև հողատէրերը, որոնք գործարանին իստակացրած հողի փոքրիկ կտորի համար ահագին կապալ են վերցնում: Օգուտի միւս մասը մտնում է, որպէս հարկ պետութեան գրամարկը, որն այդ փողերով պահում է աստիճանաւորներին, օֆիցիէրներին, մինիստրներին և այլն: Եւ վերջապէս յաւելեալ արժէքի մի մասն էլ ստանում են վաճառականները, որոնք ծախում են ապրանքը սպառողին: Այդ բոլոր միջնորդները, ցանկանում են նոյնպէս շահել և դրա համար բարձրացնում են ապրանքի գինը: Այդ պատճառով բանւորները մթերքների համար աւելի են վճարում քան արժէ իրապէս ապրանքը: Գնի մէջ եղած այդ տարբերութիւնը նոյնպէս կազմում է բանւորներից խլած յաւելեալ արժէքի մի մասը:

Այսպէս, օրինակ՝ եթէ որևէ գործարանում, տարւայ ընթացքում իւրաքանչիւր բանւորի արտադրած ապրանքի արժէքը կազմում է միջին թւով 720 բուբլի, այն ինչ մէկ բանւորի վարձն է միջին թւով 480 բուբլի, ապա ուրեմն այդ

դէպքում յաւելեալ արժէքը ըստ երևոյթին հաւասար պիտի լինէ 240 բուբլու: Բայց պէտք է ի նկատի ունենալ, որ այն 480 բուբլու մէջ որ ստացել է բանւորը, կայ նոյնպէս յաւելեալ արժէքի մի խոշոր մաս: Բաւականաչափ մեծ շահ է ստանում բանւորից, առանց իր կողմից որևէ աշխատանք կատարելու, այն տնասէրը, որը վարձով է սալիս բանւորին իր բնակարանը: Անհրաժեշտ պիտոյքներ գնելիս բանւորը միջոց է տալիս շահելու բազմաթիւ վաճառականներին և տուրք վճարում պետութեանը, հացի և մսի համար բանւորը վճարում է դրամ, որի մեծագոյն մասը մտնում է կալւածատիրոջ գրպանը: Ահա այսպէս բանւորի աշխատավարձից խոշոր մասերը կլանում են ուրիշ դասակարգերը:

Այդ բոլորը կարելի է այլ կերպ էլ պարզել: Բանւոր դասակարգը արտադրում է բոլոր իրերը,—գործիքները, մեքենաները, շինութիւնները, բոլոր անհրաժեշտ պիտոյքները, ինչպէս և վայելքի իրերը. այդ իրերն սպառում են բոլոր մարդիք. ինքը, բանւոր դասակարգը, սպառում է դրանց մի մասը միայն, մնացեալ ամենախոշոր մասը կազմում է յաւելեալ արժէքը. նա կամ իւրացուում է ճասարակութեան ուրիշ դասակարգերի կողմից կամ սպառում է կամ կրկին մտնում արտադրութեան մէջ: Այն, ինչ որ ստեղծուում է գործարանային բանւորի, զիւղատնտեսական պրոլետարի և մանր գիւղացու ծանր աշխատանքի շնորհիւ, կերակրում և ապրուստի միջոց է տալիս բոլոր մնացած ազգաբնակչութեանը. միայն նրանց աշխատանքով են ապրում գործարանատէրերը, կալւածատէրերը, հարուստ առևտրականները, տնատէրերը, խանութպանները, մինիստրները, հրամանատարները, դատաւորները, փաստաբանները, պրօֆեսսորները և ուսանողները: Նրանց աշխատանքի արգիւնքով են ապրում սեփականատէրերի դասակարգը, և բոլոր այն աշխատանքի ընդունակ մարդիք, որոնց պահում է այդ դասակարգը իր չարմարութիւնների և նպատակների համար, հաճոյքի կամ ապահովութեան համար՝

սպասաւորներ, գերասաններ, գծագրիչներ, աստիկանութիւնը և զինւորականութիւնը: Այդ բոլոր մարդիկ արդիւնաւէտ աշխատանքով չեն զբաղւած և ուրեմն յաւելեալ առժէքով են ապրում: Այն ամենը, որ այդպիսով խլոււմ է բանւոր դասակարգից կազմում է այն թալանը, որը նրանք բաժանում են միմիանց մէջ և որն օրէց օր, օտարէց օտարի իւրացնում են կապիտալիստները:

Թալանի այդ բաժանումը մասամբ կատարւում է անկախ մտորդիանց կամքից, կամ ինչպէս տասւմ են երբեմն, նա ծագում է շնորհիւ կապիտալիստական կարգերի օրէնքներից: Բայց մասամբ էլ թալանի այդ բաժանումը կուրի պատճառ է դառնում այն դասակարգերի միջև, որոնք մասնակցում են բանւորի հարստահարութեանը:

Կապիտալիստական կարգերի «բնական», «անփոփոխ» օրէնքներն, որոնց ենթարկւում է թալանի բաժանումը, մրցման օրէնքներն են:

Այդ օրէնքներն երկուս են: Առաջինը կայանում է նրանում, որ մի և նոյն ապրանքը միևնոյն դիրք ունի, անկախ նրանից, թէ ո՛ւր է նա արտադրւած՝ գործարանում, ամենանոր օրստեմի մեքենաներով, թէ ամենահասարակ արհեստանոցում: Երկրորդ օրէնքը կայանում է նրանում, որ կապիտալը հաւասար շահ է տալիս, բոլոր հիմնարկութիւններում, արտադրութեան բոլոր ճիւղերում, թէկուզ նա գործադրի ամենատարբեր ապրանքների արտադրութեան համար:

Առաջին օրէնքը ստիպում է բոլոր ձեռնարկողներին միշտ բարձրացնել իրենց ձեռնարկութիւնների արդիւնաւէտութիւնը: Նա, ով աւելի արդիւնաւէտ ձեռնարկութիւն կունենայ, կարող է իր ապրանքը շատ աւելի էժան ծախել: Բայց կապիտալիստը այլ կերպ է վարւում. նա ծախում է ապրանքը միայն մի քիչ աւելի էժան և շնորհիւ դրան ստանում է դարձեալ առանձին շահ, որը կորցում է իր այն կոնկրետները:

ներից, որոնք օտարւած են ապրանքը աւելի էժան ծախել և կորցնել իրենց շահի մէկ մասը: Այն կապիտալիստները, որոնց ձեռնարկութիւնների արդիւնաւէտութիւնը տւեալ ճիւղում միջինից ցածր է՝ օտանում են աւելի քիչ: Նրանք, որոնց արդիւնաւէտութիւնը աւելի բարձր է միջինից՝ ստանում են աւելի խոշոր մասը այն ընդհանուր յաւելեալ արժէքի, որ ստեղծել են այդ ձեռնարկութիւններում աշխատող բոլոր բանւորները: Այդ հասարակ օրէնքը հիմնական պատճառն է այն կապիտալիստական զարգացման, որն անընդհատ բարձրացնում է աշխատանքի արդիւնաւէտութիւնը և որը մենք նկատում ենք ամբողջ XIX դարի ցնթացքում:

Այդ օրէնքը նպաստում է մեքենաների, տեխնիկայի և առևտրական բարենորոգումների զարգացմանը: Ով չաղթում է մրցման պրօցէստում ստանում է իրը և խրոխտանք յաւելեալ արժէքի շահի մի մասը, իսկ չաղթուածից խլոււմ է կամ նրա մասը, կամ էլ երբեմն բոլոր օգուտը: Այդ վերջին պարագայում չաղթուողը ընկնում է:

Այն կատաղի մրցումը, որն անդադար չառաչ է մղում կապիտալիստներին, ստեղծել է թալանը բաժանելու համար:

Պարզ է, որ իրերի այդ դրութիւնը ստիպում է առանձին կապիտալիստներին չամառ կերպով մաքառել բանւորների պահանջների դէմ, որովհետև այդ պահանջների յագեցումը կարող է նրան թուլացնել այն կուտում, որ մղում է նա ուրիշ կապիտալիստ-կոնկրետների դէմ:

Այժմ տեսնում էք, թէ ինչպիսի սուտ են ասում կապիտալիստները, երբ ասում են՝ չէ՛ որ կապիտալիստն էլ է աշխատում, և յաճախ շատ աւելի քան բանւորը: Բայց մենք խոմ լաւ գիտենք, որ կապիտալիստի աշխատանքը և բանւորի աշխատանքը բոլորովին այլ բաներ են, հէնց իրենց բնոյթով տարբեր: Բանւորի աշխատանքը իրեր է արտադրում, որ անհրաժէշտ են ամբողջ ազգաբնակչութեանը, և այդ իրերի մեծ մասը խլում է նրանից բուրժուազիան: Իսկ կապիտալիստի

աշխատանքը կայանում է միայն նրանում, որ այդ բանւորից խլած թալանից որքան կորելի է մեծ մասը իրեն ձեռքը զցի: Կապիտալիստի աշխատանքը նման է այն աւագակների աշխատանքին որոնք վիճում և կուռում են իրար հետ, որպէսզի իրենց հասնի ընդհանուր թալանի կարելի եղածի չափ մեծ մասը:

Կոնկուրենցիայի երկրորդ օրէնքը նայնպէս հեշտ է հասկանալ: Կապիտալը միշտ փնդում, որոնում է ամենաբարձր աղբիւրը: Եթէ արգիւնարերութեան որեւէ ճիւղում միջին շահը աւելի բարձր է, քան միւսներում, կապիտալները իսկոյն այդ ճիւղին են դիմում և այդ կապիտալների մրցման ազդեցութեան շնորհիւ, շահը այդ ճիւղում պակասում է: Իսկ այն ձեռնարկութիւններից, ուր շահը շատ ցածր է, կապիտալիստները փախչում են մինչև որ այդ ճիւղում արտադրած ապրանքի գինը բարձրանայ և շահը, դրա շնորհիւ մեծանայ: Այդպիսով ճշակում է արգիւնարերութեան բոլոր ճիւղերում շահի ընդհանուր մահարդակ: Այն ձեռնարկութիւններում, ուր հարկաւոր է մեծ կապիտալ և քիչ բանւորական ոյժ, և ուրեք քիչ յաւելեալ արժէք է ստեղծւում, նորմալ օգուտը ստացւում է շնորհիւ նրան, որ գները դառնում են աւելի բարձր, քան նրանց իրական արժէքը: Այսպիսով այդ ձեռնարկութիւնները կրնան են շահի մի մասը: Այդ բոլորից պարզ պիտի լինի որ յաւելեալ արժէքը չի ստեղծում առանձին բանւորն առանձին կապիտալիստի համար, այլ ամբողջ բանւոր դասակարգը կապիտալիստների համար: Այդ պարոնները բաժանում են իրենց մէջ ամբողջ յաւելեալ արժէքը և այդ դէպքում նրանք նկատի են առնում ոչ թէ ամեն մի կապիտալիստի իր գործաբանում արտադրած իրերի քանակութիւնը, այլ կապիտալի այն զօւմարը, որ նրանցից ամեն մէկը մտցրել է արգիւնարերութեան ընդհանուր և բարձր գործի մէջ:

Իրանում պէտք է աեսնել այն երեւոյթի պատճառը, և

այն պահանջները, որ արտադրութեան մի օրեւէ ճիւղում բանող բանւորներն են դնում, շօշափում են ոչ միայն այդ ճիւղի կապիտալիստների, այլ կապիտալիստների ամբողջ դասակարգի շահերը: Ենթադրենք, որ օրեւէ քաղաքի ատաղձագործներն ստիպել են իրենց կապալառուներին զգալի կերպով բարձրացնել աշխատավարձը: Ի՞նչ է, այդ կապալառուները կը համաձայնւնեն աներ կառուցել առաջւայ գների համեմատ և ստանալ այդպիսով աւելի քիչ շահ, ո՛չ մի դէպքում. նրանք կաշխատեն չեա ստանալ վնասը, կաշխատեն բարձրացնել կապալի և տան ծախքի վարձը: Այդ դէպքում ամեն մի կապիտալիստ, որ իրեն համար տուն է շինում, ամեն մի գործաբանատէր, որ գործարան է հիմնում, ամեն մի առետրական, որ խօնութ է կառուցանում օտիպւած կլինի առաջւանից մի քիչ աւելի վճարել: Եւ այդ հանգամանքը կորոշէ նրանց վերաբերմունքը դէպի բանւորների անտեսական կեիւր. կապիտալիստները կը վրդովեն բանւորների պահանջների դէմ ոչ միայն այն պատճառով, որ առհասարակ թշնամաբար են վերաբերւում բանւորներին և կապւած են բարեկամական կապերով կապալառուների հետ: Նրանք շատ լաւ են հասկանում և բացարձակ ցոյց են տալիս, որ նրանք վրդովում են բանւորների դէմ այն պատճառով, որ վերջիններ կապիտալիստների շահերն են շօշափում:

Միջին շահի (շահի նորմալի) ահա այդ հաւասարեցումը արտադրութեան առանձին ճիւղերում պատճառ է դառնում դասակարգային համեաշխութեան, որ ստիպում է կապիտալիստների ամբողջ դասակարգը միացած կաւել բանւորների ա՛յն պահանջների դէմ անգամ, որոնք չեն սպառնում կապիտալիստական կարգերի զոյութեանը: Ամեն մի կապիտալիստ շատ ճիշտ կշռում է, որ բանւորների ամեն մի աւելորդ աշխատավարձը հաւասար է իր շահի պակասեցմանը: Ինչքան էլ հասկանալի լինեն մեզ կապիտալիստներին զբոյոզ պատճառները, նրանք չեն կարող արդար համարել: Որովհետեւ,

եթէ բանւորները պահանջում են որ իրենց մասը մեծանայ, դա չի նշանակում, որ կապիտալի շահը կպակասի. դա նշանակում է միայն, որ շահի տն ահադին աւելացումը, որ գոյանում է իւրաքանչիւր տարի շնորհիւ արտադրական միջոցների զարգացման չի մտնի ամբողջովին կապիտալիստների գրպանը, այլ նրա մի փոքրիկ մասը կգործադրւի բանւորների դրուժիւնը բարելաւելու վրայ: Եւ կապիտալիստների կռիւր բանւորները: բոլոր և ամեն տեսակ պահանջների գէժ բացատրւում է միայն նրանց անյազ ազատութեամբ:

II.

Թալանի բաժանման շնորհիւ միշտ քաղաքական կռիւ է ստեղծւել տիրող դասակարգների միջև: Այնքան, որքան անմիջական վտանգ չի սպառնայ կապիտալիստական հասարակարգին, տիրող դասակարգերից իւրաքանչիւրը վիճել և կռւել է այս մասին, թէ՛ Թալանի ո՞ր կտորը պիտի իրեն հասնի: Զգտելով գրեւէ քաղաքական իշխանութիւնն իւրաքանչիւր դասակարգը նկատի ունի այդ իշխանութեան միջոցաւ պաշտպանել իր նիւթական շահերը:

Իրերի դրուժիւնը կառարելապէս փոխւում է այն մոմէնտից, երբ պրոլետարիատը սկսում է մասնակցել քաղաքական պայքարին: Այժմ արգէն սեփականատէրերի առանցակարգ և գլխաւոր նպատակն է լինում՝ սեփականատէրերի ընդհանուր ոյժերով պաշտպանել Թալանը:

Այնքան, որքան տններն է դառնում շահերի այդ ընդհանրութիւնը, տարաձայնութիւնները մեղմանում են: Նրանց պառակառօնները դադարում են, որովհետեւ բոլոր բուրժուաները կազմակերպում են ընդհանուր գաշնակցութիւն հին կարգերի պաշտպանութեան համար: Բայց դրա շնորհիւ չի անհետանում վերջնականապէս նրանց մէջ եղած պայքարը: Քանի դեռ Թալանը և բաժանումը գոյութիւն ունի՝ կշարունակւեն և այդ բաժանման առիթով ծագած կռիւները: Բայց

այդ կռիւն այժմ, երբ պրոլետարիատը սպառնում է ոչնչացնել շահագործման հիմքը, բոլորովին այլ ընդթ է ստանում:

Եթէ մենք կամենանք քննել տիրողների անազարա դասակարգային պայքարը, եթէ մենք ցանկանանք քննել տարբեր բուրժուական կուսակցութիւնների քաղաքական մրցակցութեան դրգապատճառը, պէտք է քննենք XIX դարի առաջին կէսի պատմութիւնը: Դրա համար մենք պէտք է քննենք Մնդլիթան, ուր այդ ժամանակ կար դարգացած կապիտալիզմ, թէ և տակաւին գոյութիւն չունէր սոցիալիստական բանւորական շարժում:

Այդ շրջանում, Մնդլիթայում գործարանատէր կապիտալիստներից խլում էին յաւելեալ արժէքը երկու դասակարգեր՝ զբամատէր կապիտալիստների դասակարգը և հողատէրերի դասակարգը: Առանձնապէս կատաղի կռիւ էր մղւում Թալանի բաժանման համար արգիւնարերող կապիտալիստների և հողատէրերի միջև: Գործարանատէրը չէր վրդովւում, երբ անհրաժեշտ էր լինում յաւելեալ արժէքի մի մասը յանձնել դրամատէրին որովհետեւ իր սեփական շահը, թւում էր նրան կապիտալի արգիւնը, իսկ կապիտալի բազմանալու ընդունակութիւնը նա համարում էր դրամանշանների ընդհանուր յատկութիւն: Բայց այն տուրքը, որ նրանից վերցնում էր հողատէրը, գործարանատէրը համարում էր բոլորովին անարդար: Նրան թւում էր, թէ միայն կապիտալն է շահ բերում, և այդորինակ շահը փոքրանում է շնորհիւ հողատէրին յանձնած կապալի: Այդ պատճառով կապիտալիստը համարում էր հողատէրին մի «անպիտան» և «ձբիակեր», որ ազրում է «աշխատաւոր» արգիւնարերական բուրժուազիայի հաշիւն: Այստեղից պարզ է, որ «հողային ըէֆորմա», այսինքր հողի սեփականութեան իրաւունքի պետութեան տալը, այլ խօսքով՝ ձբիակեր կալաճատէրերի դասակարգի ոչնչացումը, մեծ համակրութիւն էր վայելւում: Իհարկէ, այդ բարենորոգման կողմնակիցները մի քիչ չափազանցութեան են հասել, և այժմ

Գերմանիայում, օրինակ, այդ միտքը պաշտպանում են միայն սակավթիվ միամիտներն, այնինչ բուրժուազիայի լայն խավերը նրան չեն համակրում: Գանգնենք տեսակէտների այդ փոփոխութեան վրայ:

Անգլիայում, անգլիական հողատէրերը, ինչպէս ներկայումս գերմանականները օգտւում էին հացի առևտրից: Նրանք արևեստական միջոցներով բարձրացում էին հացի գինը մաքսի շնորհիւ: Այդ հացային մաքսերի շուրջը 1830 և 1840 թւերի ժամանակամիջոցում խիստ կռիւ էր ստեղծել լիբերալների (վիզերի) և պահպանողականների (տորիների) միջև. սուալինները՝ գործարանատէրերի կօսակցութիւնն էին, վերջինները՝ հողատէրերի: Այդ կուռում, ինչպէս յայտնի է յողթող հանդիսացան գործարանատէրերը: Պարզ էր, որ այդ կռիւը բանւորների շահերը չէր շոշափում. բանւորները շատ լաւ հասկանում էին, որ հացի մաքսը իջեցնելու է նրանց աշխատավարձը: Բանւորների գրութիւնը ամենևին չէր փոխում, որովհետև վիճելի խնդիրը կայանում էր միայն նրանում, որ էժան հացի շնորհիւ կաւելանար գործարանատիրոջ շահը, իսկ միւս դէպքում, թանգ հացի շնորհիւ պիտի աւելանար հողատիրոջ շահը: Երկու շահագործող դասակարգերի միջև մղւած այդ կռիւը կարող էր ջարդանակել, որովհետև ոչ մէկը այդ դասակարգերից չէր մտածում թէ որևէ վտանգ կարող է սպառնալ այն թալանին, որի բաժանելու համար էին նրանք կուռում միմիանց Կես: Բանւոր դասակարգն այդ շրջանում ևս կազմակերպւած էր և առաջադրում էր քաղաքական պահանջների ու 10-ժամեայ բանւորական օրի պահանջը: Բայց նա իր «խարտի» բաղադրական ծրագրի մէջ դեռ չէր մտցրել սոցիալիստական պահանջներ:

Ինչ հիման վրայ կարող են հողատէրերը հարկ առնել կապիտալիստներից: Միայն նրա հիման վրայ, որ նրանց ձեռքին է գտնւում հողային սեփականութիւնը, իսկ հողը միայն որոշ, սահմանափակ քանակութեամբ գոյութիւն ունի դա

նրանց մօնօպոլիան է*): Եթէ մէկը ուզում է քաղաքում գործարան կառուցել, նա ստիպւած է լինում երբեմն հսկայական կապալավարձ տալ հողի մի կտորի համար, որովհետև այդ պատճառը նրան անհրաժեշտ է, իսկ այլուր գտնել այդպիսի վայր անհնարին է: Եւ այնքան, որքան ցորենը և համարը կարող են բննել միայն հողի սահմանափակ տարածութեան վրայ ու հողատէրերը առիթ չունին որևէ մրցումից վախենալու, նրանք կարող են պահանջել իրենց հացի համար ամենամեծ վարձ, որպէսզի ստացւի պատկառելի շահ: Այդ պարագայում միևնոյն է նրանք են այդ հողը շահագործում, թէ նրանք այդ հողը կապւով են տալիս առանձին Ֆերմերներին, որանցիք և ստանում են ամենամեծ կապալավարձ:

Հողային բէնալի***) ծագումը ցայց է տալիս մեզ, ինչումն է կայանում կալւածատիրական սեփականութիւնը պաշտպանողների խոցելի կողմը: Մրանց մօնօպոլիան կարող է ոչնչանալ, և նա որոշ չափով արգէն ոչնչացել է ամերիկական ցորենի մրցման շնորհիւ: Ովհիանոսի միւս կողմում վարել են արգիւնաբեր հողերի ահագին տարածութիւններ: Այդ հողի մշակման վրայ շատ քիչ աշխատանք է թափել, բայց այնուամենայնիւ նրանք տալիս են ամենահարուստ հունձ իսկ ծովային հողորդակցութեան լաւագոյն պայմանները նպաստել այն հանդամանքին, որ այդ հացը սկսել է էժան ծախել Եւրոպայում:

Այդ պատճառով Եւրոպական կալւածատէրերը այլևս չէին կարող ինքնազուլս որոշել հացի գները և իրենց օգտին հարկ վերցնել արգիւնաբերութիւնից: Եւ ահա Արևմտեան Եւրոպայի խիտ ազգաբնակիչութիւն ունեցող վայրերում անու-

*) Մօնօպոլիա նշանակում է մենաշնորհ, մի որևէ բանի բացառիկ իրաւունքը, օրինակ Ռուսաստանում առաջ միայն պետութիւնն էր կարող շինել և ծախել օդի: Հենց այդ իրաւունքն էլ կոչւում էր օդու մօնօպոլիա:

**) Հողային բէնալ է կոչւում հողից ստացւած այն շահը, որ ստացւում է անկախ նրանից, թէ մշակել է այդ հողը առաջ թէ ոչ, ծախւել է և քա մշակման վրայ որոշ կապիտալ թէ ոչ:

շաղրութեան մատնեց հացի այլևս անշահաւէտ արտադրութիւնը: Այդ վայրերում սկսեցին բաժին բաժին անել հողը և դիմել այլ բոյսերի արտադրութեան, կամ թէ քջացնել ծախքերը զանազան բարենորոգումների միջոցով: Բայց Պրուսսիայի կալաժատէրերը գտան ուրիշ ելք: Օգտագործելով իրենց բաղաճական ոյժը, նրանք իրենց ձեռքին պահեցին մոնոպոլիան հացային տուրքերի միջոցով:

Եթէ Գերմանիայի քաղաքական գրութիւնը նոյնը լինէր, ինչ որ Անգլիայինն էր անցած զարի քառասնական թւականներին, կալաժատէրերի և դորժարանատէրերի մէջ անպայման կստեղծէր խոշորագոյն պայքար: Բայց շնորհիւ նրան, որ քաղաքական կուրի ասպարէզ էր իշել, սոցիալ-դեմոկրատիայի դրօշի աակ պրոլետարիատը, իրերի դրութիւնը փոխել է զգալի կերպով: Այդ դրութեան շնորհիւ ոչ միայն 1878 թւին հացային տուրքեր մտցնեցին, այլև ատեղծեց այն ծայրայեղ վաշխառութիւնը, այն հացային սպեկուլեցիան, որը դիտում ենք ներկայումս:

Մինչդեռ առաջ Անգլիայում հացային տուրքերի համար կուր էր մղում բուրժուազիայի և կալաժատէրերի միջև, ներկայումս Գերմանիայում այդ երկու դասակարգերը միացել են բանւորների դէմ: Լիբերալ բուրժուազիան այլևս չի ընդգիծադրում այն հողատէրերին, որոնք պակսեցնում են նրա շահերը, որովհետև պրոլետարիատն օպառնում է ոչնչացել բոլոր կապիտալիստական հասարակարգը: Պրոլետարիատը ներկայումս ամենավտանգուօր թշնամին է Եւ նրան յաղթելու համար կապիտալիստները դէմ չեն օգուելու կոպիտ, մեծամիտ զերմանական կալաժատէրերի (իւնկերների) օգնութիւնից: Եւ Պրուսսիայի կալաժատէրերը դարձան «պրէտորիականներ»*) սեփականատէր դասակարգի պաշտպանները, չնայած նրան որ դրանք վիրաւորում, սարսփեցնում են կապիտալիստներին՝ հարկուօր է իւնկերներին ամեն կերպ

*) Պրէտորիականներ՝ բանակալ-զինւորներ հին Հռոմում:

չարգանք ցուց տալ: Այժմ բուրժուազիան չի սիրում խօսել հողային սեփականութեան դէմ: Հիմա հողատէրերը չեն համարում կապիտալիստներին անպիտան և ձրիակեր: Սոցիալիզմը հէնց իրենց պարոն-կապիտալիստներին էլ է անւանում աշխատաւորի մարմինը ծծող-տղրուկներ: Ել ինչպէս կարող են կապիտալիստները վրդովել կալաժատէրերի դէմ: Նրանով է բացատրում այն հանդամանքը, որ զերմանական լիբերալ բուրժուազիան ո՛չ միայն չէ կուում պրուսսական կալաժատէրերի հացային շահամոլութեան դէմ, այլ նոյնիսկ նպաստում է նրան: Սակայն իր շահերից բուրժուազիան ոչինչ չի համաձայնել տալ կալաժատէրերին: Մինչդեռ Անգլիայում էժան հացին համապատասխանում էր ցած աշխատավարձ, իսկ թանգ հացին — բարձր աշխատավարձ, և դրա շնորհիւ մաքսերի պատճառով մղած կուր բանւորներին չէր վնասում, Գերմանիայում իրերի դրութիւնը բոլորովին այլ կերպ է: Գործարանատէրերը ոչ միայն չեն մտածում անւանել բանւորների աշխատավարձը հացի բարձր գների համեմատ, այլ և բանւորական կազմակերպութիւնների դէմ են ելնում, երբ վերջիններն սկսում են կուել հացն էժանացնելու համար: Բուրժուազիան մտադիր է վարձատրել կալաժատէրերին օչ թէ իր, այլ բանւորների զրպանից: Թող կալաժատէրերը հարստանան, դա չի փոքրացնի կապիտալիստների եկամուտները, իսկ դրա համար պէտք է աւելացնել բանւոր դասակարգից խլած թալանը: Ինչպէս երևում է կապիտալիստները զեկավարում են աւետարանի ասածով՝ «ուենւորին տրում է, իսկ չքաւորից խլում է այն, ինչ որ նա օւնի»:

Իհարկէ որոշ չափով պէտք է տուժի և արդիւնաբերական բուրժուազիան. կապիտալիստները օլէտք է օրոշ զոհաբերութիւն անեն յօգուտ կալաժատէրերի:

Ծիշա այնպէս, ինչպէս պաշարւած բերդում զինւորական զիկտատուրան որոշ անյարմարութիւններ է պատճառում բնակիչներին, բուրժուազիան, կապիտալիզմի պաշարւած

ամբուլթիւններում ստիպւած է հաշուել կարւածատէրերի իշխանութեան հետ: Բայց, աւա՞ղ, դա նրան չի օգնիր: Նէնց այն ազահութիւնը, որ ստիպում է վարձատրել կարւածատէրերին ոչ թէ բուրժուազիայի, այլ բանւոր դասակարգի զբոսանից հէնց այդ ազահութիւնը կտապալէ բուրժուազիային:

Զգաւելով իր իշխանութիւնն ամրացնելու բուրժուազիան ինքն իրեն մահացու հարւած է հասցնում:

Պաշտպաններ վարձելով, կապիտալիստները դրանով ստեղծում են իրենց համար հարիւր հազարաւոր և միլիոնաւոր նոր կատաղի թշնամիներ:

Զկայ հարստահարութիւնը պահպանելու աւելի վառ միջոց, քան այն միջոցը, որ ուժեղացնում է հարստահարութիւնը: Արդէն այն հանգամանքը, որ կապիտալիստները, հարստահարողները չունին քաղաքական հասկացողութիւն այդ բոլորը բժբունելու, այդ արդէն ցոյց է տալիս բանւոր դասակարգին, որքան յաջող կրնժանայ նրա պայքարը:

Այդպէս ուրեմն, անցել է այլևս այն շրջանը, երբ տիրող դասակարգերը թալանը բաժանելու համար կուռւմ էին միմիանց հետ: Բանւոր դասակարգին աւելի ևս ուժեղնորհն շահագործելու համար տիրող դասակարգերը հաշուել են միմիանց հետ և փոխադարձ համաձայնութիւն են կնքել: Եւ արդէն դա անհրաժեշտաբար վերջ կտայ այն կարգերին, որոնք ստեղծում և նպաստում են որևէ շահագործման:



ՀՀ Ազգային գրադարան



NL0196542

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ**

- 1) Ռ. Սոց. Ծեղ. Խորհուրդների Հանրապետության Սահմանադրու-
թիւնը:
- 2) Ն. ԼԵՆԻՆ. «Նամակ Ամերիկեան բանորհներին» — գինը՝ 1 ռուբ.
- 3) Վ. ՖՐԻՉԷ. «Պոլիտարական պոէզիան» — գինը՝ 2 ռ.
- 4) ԶիՉԵՐԻՆ. «Բրեստից լետոյ» (Զեկուցում Խորհուրդների 5-րդ
Համագումարին) — գինը՝ 1 ռուբ.
- 5) ՆԵՐՉԱԿ. «Դէպքերը Բապում, Հ. Յ. Դաշնակցութիւնը և Բազեի
Խորհրդային Իշխանութիւնը»:
- 6) Ն. ԼԵՆԻՆ. «Կարլ Մարքս» (Համառոտ պնասագրութիւնը և մարք-
սիզմի շարադրութիւնը) — գինը՝ 1 ռ. 50 կ.
- 7) ՆԵՐՉԱԿ. «Տնտեսական Յեղափոխութիւնը և պոլիտարիատի տակ-
տիկան» — գինը՝ 1 ռ.
- 8) Ն. ԲՈՒԽԱՐԻՆ. «Կոմունիստների ծրագիրը» — գինը՝ 3 ռ.
- 9) Մ. ՊԱԿԼԻՆՎԻՉ (Վելյաման) «Նստան և իր դերը համաշխարհա-
յին պատերազմի մէջ» — գինը՝ 3 ռ.
- 10) ԿԱՐԼ ՌԱՒԻՅ. I. «Կոմունիստական Կուսակցութիւնը Գեր-
մանիայում». II. «Կարլ Լիբկնեխտ» (Լիբկնեխտի նկարով) — գինը՝ 1 ռ.
- 11) «Խորհրդային Կառավարութեան նստան Վիլսոնին» — գինը՝ 75 կ.
- 12) «Միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրութիւնը» —
գինը՝ 2 ռուբ.
- 13) Հ. ՅՈՎՍՍԷՓԵԱՆ. «Դէպի քաղաքացիական կռիւ»:
- 14) Գ. ԶԻՆՈՎԵԻ, ԻԻ. ԿԱՄՆԵՆԵԻ և Լ. ՏՐՈՅԿԻ — «Ն. Լենին»
(Վաղիմիր Իլիչ Ուլյանով) — գինը՝ 2 ռ.
- 15) Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. ԷՆԳԵԼՍ «Կոմունիստական Մանիֆեստ» —
Պլեխանովի, Կառցու և հեղինակների առաջաբաններով — գինը՝ 3 ռ
- 16) Պ. ԼԱՅՄԱՐԳ Տնտեսական էտիւցիա և Կոմունիզմ — գինը՝ 50 կ.
- 17) ԿԱՐՊԻՆՍԿԻ. «Խոնջ բան է Խորհրդային Իշխանութիւնը և ինչ-
պէս է նա կազմուած» — գինը՝ 2 ռ.
- 18) Յրանսիական Մձձ Յեղափոխութիւնը — գինը՝ 3 ռ.
- 19) Վ. ԿԵՐԺԵՆՅԵՆ. «Ինչպէս վարել ժողովը» — գինը՝ 2 ռ. 50 կ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏ. ԿՈՒՍԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ**

- 1) Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան (Բուրճեիկների)
Ծրագիրը:
- 2) III հնտերնացիոնալի Պլատֆորման:
- 3) Ն. ԼԵՆԻՆ. «Թեզիսներ բուրժուական և պոլիտարական դեմո-
կրատիայի մասին» — գինը՝ 50 կոպ.
- 4) Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան ներկայացուցիչի գե-
կուցումը III կոմունիստական ինտերնացիոնալին — գինը՝ 60 կոպ.:
- 5) Կոմունիստական ինտերնացիոնալի Մանիֆեստը ամբողջ աշխարհի
պոլիտարիատին — գինը՝ 1 ռ.
- 6) Ն. ԼԵՆԻՆ «Երրորդ ինտերնացիոնալի տեղը պատմութեան մէջ»
— գինը՝ 1 ռ.:
- 7) Ն. ԼԵՆԻՆ. «Խոնջ պէտք է լինի մեր կուսակցութեան անունը» —
գինը՝ 60 կ.: